




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

95

13

Հ. Ս. Խ. Հ.

Պրոպագանդայի քոլար յերկրների, միացե՛ր.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԱՆԴՐԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Բ. Գ. ԴԱՆՍԿԻՅ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՑԱՐԱԿԱՆ, ՄԵՆՇԵՎԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՈՐԵՆԲՆԵՐԸ

Թարգմանեց՝ Կ. Հ.



300
1930-ԴԱ

ՀՐԾ.ՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԻ
ՅԵՐԵՎԱՆ—1923.

368.4 (47)

Հ. Ս. Ս. Հ.

Պատկերակցող բոլոր յեղիքները, միացնելով.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԱՆԴՐԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԱԶՈՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

300

1230-70


Բ. Գ. ԴԱՆՍԿԻՅ



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՅԱՐԱԳԱՆ, ՄԵՆՇԵՎԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՈՐԵՆԲՆԵՐԸ

Թարգմանեց՝ Կ. Հ.



ՅԵՐԵՎԱՆ
Առաջին Տրեսի եպարան
1923

ՅԱՆԿ

1912 թ. հունիս 23-ի որենքները	3
Ինչ եր ապիս բանվորներին ցարական ապահովագրությունը	5
Ցարական բժշկական ոգնությունը	6
Ովքեր ելին վարում ցարական ապահովագրական պորժը	6
Բանվորական ապահովագրական լոգոնգները	8
Պայքար մենչեիկներին դեմ	10
Բանվորական ապահովագրական ծրագիրը	12
Մենչեիկական ապահովագրական որենքները	13
Խորհրդային ապահովագրական որենքները	15
Խորհրդային ապահովագրական կամպանիան	19



11-2419999

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱ- ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՑԱՐԱԿԱՆ, ՄԵՆՇԵՎԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ

1912 թ. հունիս 23-ի որենքները

1912 թ. հունիս 23-ի ցարական սոցիալական ապահովագրությունը բաղկացել է 2 որենքից՝ հիվանդության դեպքում բանվորներին ապահովելու որենքից և դժբաղա պատահարներից ապահովագրելու որենքից:

Արդեն որենքների անուններից պարզ է, վոր դրանք վերաբերել են բանվորների աշխատունակությունը կորցնելու յերկու դեպքին միայն՝ հիվանդության և աշխատանքային հաշմության: Իսկ արհեստի պատճառով (պրոֆեսիոնալ) առաջացած հիվանդությունները և հիվանդություններից առաջացող հաշմությունը: Իսկ ընտանիքի կերակրողի մահը: Իսկ գործազրկությունը: Այդ ամենը հաշվի չէր առնում ցարական կառավարությունը: Կարծես թե այդ բոլոր սե որերը բնավ չեն յեղել բանվորների կյանքում և ցարական միխատրները, բուրժուազիան և կալվածատերերը բոլորովին մոռանում էին բանվորի դժբախտ որերի մասին, յերբ ապահովագրական որենքներ ելին հրատարակում թշվառ ու վոգորմեղի պարլամենտի՝ Պետական Դումայի միջոցով:

Ցարական Ռուսաստանում ապահովագրության յենթակա եր ընդամենը յերկու միլիոն բանվոր, վորոնք աշխատում էին խոշոր դրժաշտաններում: Հեղափոխական

դասակարգի այդ առաջապահին, հին Ռուսաստանի տերերը ցանկանում էին հանգստացնել կեղծ, միանգամայն անտեղի բանվորական կոչվող որենադրությամբ։ Ապահովագրությունը չէր տարածվում նույնիսկ յերկաթուղու ծառայողների վրա։ Մանր արհեստանոցների և գյուղատնտեսական բանվորների, ինչպես և պետական ստորին պաշտոնյաների մասին «որենադիրները» չէին ել հիշում։ Վերջապես, այդ խուզված ապահովագրությունը չէր տարածվում Սիբիրի և Թուրքեստանի վրա։

Հիմա տեսնենք, թե ում հաշվին եին գործադրվում ցարական ապահովագրական որենքները։

Միանգամայն բնական պետք է թվար, յեթե բանվորներին «բարերարություն» անողները ապահովագրության համար փող վերցնեյին արդյունաբերողներից (գործարանատերերից), վորոնք հարստանում էին բանվորներին շահագործելու միջոցով։ Բայց հենց այդպես չէր։

Հիվանդանոցային դանձարկիների մասին հրատարակված 1912 թ. հունիս 23-ի որենքի համաձայն փոշ միայն տերերն էին ապահովագրական տուրքեր վճարում, այլև բանվորներն էին իրենց աշխատավարձի մի մասը տալիս նույն նպատակի համար։

1912 թ. հունիս 2-ի որենքի համաձայն գծաթու պատահարների դեպքում ապահովագրական տուրք պետք է վճարեին միայն տերերը։ Իհարկե «բարերարները» և այստեղ ել չէին զրանա ապահովագրական տուրքերի խոշորագույն մասը դնելու բանվորների վրա, յեթե այդ ժամանակ գործելիս չը լինեյ 1903 թ. հունիս 3-ի որենքը, փորի համաձայն բանվորների հետ պատահող գծաթու պատահարների համար պատասխանատու էին տերերը։ Այդ որենքի համաձայն գործարանատերերը պետք են պաշտվճարեին իրենց միջոցներից, իսկ աշխատունակությունը բնագմիշտ կորցնելու դեպքում՝ կենսաթոշակ՝ աշխատանքային հաշմություն ստացած բանվորին։

ԻՆՉ ԵՐ ՏԱԼԻՍ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՑԱՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն տեսել ենք, վոր ցարական ապահովագրական որենքները «ապահովում էին» Ռուսաստանի բանվորներին ու ծառայողներին միայն մի աննշան մասը, այն է՝ խոշոր գործարանների 2,000,000 բանվորներին։ Ասել ենք նաև այն, վոր ցարական ապահովագրությունը բոլորովին հաշվի չէր առնում հաշմությունը, գործադրկությունը, այրիությունը և վորքությունը։

Այժմ տեսնենք, թե ինչ էին տալիս ցարական ապահովագրական որենքները սահմանավակ թիվ՝ կազմող բանվորներին հիվանդության և աշխատանքային հաշմության դեպքերում։

Հիվանդանոցային դանձարկի յուրաքանչյուր անգամ իրավունք ունեյ հիվանդության դեպքում ստանալու, վորպես նպատակ, իր աշխատավարձի մեկ քառորդից մինչև յերկու յերրորդը։ Յեթե բանվորի հիվանդությունը տևում եր անընդհատ, նպատակ տրվում եր 6 շաբաթվա ընթացքում և այն ել հիվանդության չորբորով որը, իսկ կրկնվող հիվանդությունների դեպքում 30 շաբաթվա ընթացքում։

Ծննդաբերության դեպքում դանձարկի անդամները իրավունք ունեյին ստանալու աշխատավարձի $\frac{2}{3}$ -ից մինչև լրիվ՝ յերկու շաբաթվա ընթացքում ծննդաբերությունից առաջ և չորս շաբաթ՝ ծննդաբերությունից հետո։

Աշխատանքային հաշմություն (յերբ աշխատանքի ժամանակ վնասվում է բանվորի մարմնի վորեւ անդամը) ստացած բանվորներին նպատակ եր տրվում այն չափով, ինչ չափով հիվանդության դեպքում։ Յեւ յեթե աշխատանքային հաշմությունը բժշկելուց հետո բանվորը վարձյալ մնում եր հաշմանգամ, ապա ստանում եր կենսա-

թռչակ վոչ ավելի, քան իր աշխատավորձի յերկու յեր-
բորդը:

Ահավասիկ այն ամենը, ինչ ստանում եր բանվո-
րը ցարական ապահովագրության որոք: Այսպիսով ցա-
րական կառավարությունը, հատկացնելով աննշան գու-
մարներ բանվորների ապահովագրության համար, հնարա-
վորություն չեր տալիս համապատասխան մարմիններին
վերև չափով բարձրացնելու բանվորների նպաստը: Իսկ
նպաստ տալու ժամանակամիջոցը 26 և 30 շաբաթից
ավելի չեր լինում: Յեվ յեթե բանվորը հիվանդանում եր
ավելի, քան 26 կամ 30 շաբաթ, ապա այդ դեպքում նա
զրկվում եր նպաստից և ուղղակի փողոց եր շարժվում:

Նույնը՝ և ծննդաբերության դեպքում: Չնայած, վոր
բուժօգնական բժշկականությունն ել (բժշկական դիտու-
թյունը) ծննդաբերության համար վորոշել եր նպաստի
յերեքամսյա ժամանակամիջոց (6 շաբաթ ծննդաբերու-
թյունից առաջ և 6 ել՝ հետո), այնուամենայնիվ ցարա-
կան ապահովագրական որենքներն այդ ժամանակամի-
ջոցը մեկ ամսից (ընդամենը) ավելի չեին թույլատրում:

ՑԱՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՈԳՆՈՒՅՑՈՒՆԸ

1912 թ. որենքով գործարանատերերը պարտավոր եին
միայն կազմակերպել ամբուլատորիային բուժում (ամ-
բուլատորիա-նշանակում ե քուժարան, ուր հիվանդները
յերթեկեկում են և վոչ մշտապես պարկում, ինչպես հիվան-
դանոցներում) բանվորների համար: Ինչ վերաբերում
ե հիվանդանոցներին, այդտեղ հիվանդները բժշկվում
եին «ընդհանուր հիմունքներով, ինչպես մնացած բնակ-
չությունը», այսինքն՝ վճարով:

Ո՛Վ ԵՐ ՎԱՐՈՒՄ ՑԱՐԱԿԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Ցարական կառավարությունը և արդյունաբերողները
այնպես եին վախենում բանվորական կազմակերպութ-

յուններին, ինչպես կրակից: Ընկերություններ հիմնելու
իրավունքը ցարական Ռուսաստանում վերադրված եր
միայն «բարենույս և հավատարիմ» տարրերին:

Ապահովագրական գործի կազմակերպումը բնավ ցա-
րական կառավարության անկեղծ ցանկությունը չեր:
Դորանով ցարական Ռուսաստանը միայն հետևում եր ու-
րիշ, արևմտյան, այսպես կոչվող «լուսավորված» յեր-
կրներին և առաջին հերթին Գերմանիայի որենքներին: Իսկ
Գերմանիայում բանվորները մասնակցում եին ապահովա-
գրական գործը կառավարելուն:

Յեվ վորպեսզի Ռուսաստանում բանվորները զրկվեն
ապահովագրական գործին մասնակցելու իրավունքից,
ցարական կառավարությունը խուզեց, փոփոխեց գերմա-
նական որենքները և այդպիսով բանվորների մասնակցու-
թյունը զրեթե վերացրեց (յեղած գերման. որենքներից):
Ցարական որենքագրությամբ բանվորները փոքր թվով կա-
րող եին մասնակցել հիվանդանոցային գանձարկներին
վարչության և լիտորների բնդհանուր ժողովներին. և
ավելի չնչին թվով՝ ապահովագրական բարձր մարմիննե-
րին: Այսպես՝ նախանդական ապավոհագրական առյաննե-
րում բանվորները տալիս եին յերկական ներկայացուցիչ
այն ժամանակ, յերբ գործարաններն ունեին 2 ներկայա-
ցուցիչ յրենք և 11 ներկայացուցիչ նրանց պաշտպան կա-
ռավարությունը, յանձինս ժանդարմների և շինովնիկներին:
Կենտրոնական ապահովագրական խորհրդում բանվորներն
ունեին 5 ներկայացուցիչ, տերերը՝ 5, և կառավարու-
թյունը, յանձինս նույն շինովնիկներին և ժանդարմներին՝ 16:
Դժբախտ պատահարներից ապահովագրող մարմիննե-
րում բանվորները բնավ տեղ չունեին:

Ցարական կառավարությունը և արդյունաբերողները
հրատարակելով ապահովագրական որենքներ, լավ եին գի-
տակցում միաժամանակ, թե ապահովագրական կազմա-
կերպություններում ինչ «վտանգ» եին ներկայացնում ի-

րենց համար բանվորները: Ուստի և նրանք ամեն միջոց ձեռք էին առնում խեղդելու բանվորների ձայնը: Որինակ, բանվորների ձայները միշտ փոքրամասնություն էին կազմում, բանվորական ներկայացուցիչները հաստատվում էին տերերի, ժանդարմների ու չինովնիկների կողմից:

Սակայն այդ բոլոր նախազգուշական միջոցներն իրենց նպատակին չէին հասնում: Որինական ճանապարհով մասնակցելով ապահովագրական գործին, բանվորները, վորպես ներկայացուցիչ ուղարկվում էին իրենց գիտակից ու հեղափոխական ընկերներին, վորոնք ճամառորեն պաշտպանում էին բանվորության շահերը: Յարական կառավարութայունն էլ, տեսնելով, վոր մի կողմից դարգանում է ապահովագրական շարժումը, իսկ մյուս կողմից աճում է հեղափոխական արամադրութայունը բանվորական զանգվածներում, խուսափում էր՝ «ապահովագրական վեճեր» ստեղծել: Այսպիսով, մասնակցելով հիվանդանոցային գանձարկիների ժողովներին, բանվորութայունը հետզհետե վարդացնում էր հեղափոխական — բանվորական շարժումը: Միաժամանակ բանվորութայունը սգտագործեց ապահովագրական ընտրովի լեզալ բՆիշները՝ անլեզալ (զաղտնի) անտեսական ու քաղաքական պայքարի համար:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԼՈՁՈՒՆԳՆԵՐԸ

Ապահովագրական պրոպագանդան ու պայքարն առաջ մղեցին բանվորական ապահովագրական լոգունդներ, վորոնցով նորանոր պահանջներ էին առաջադրվում և այդպիսով հետզհետե ընդլայնվում գոյութայուն ունեցող ապահովագրական որենքների շրջանակները: Թեև, առերևույթն, ցարական իշխանութայունը այդ լոգունդներին իրավաբանական ճշտութայուն էր տալիս, բայց, իրապես, այդ լոգունդները հիմնովին փոխում էին յեղած ապահովագրական որենքները:

Այդ պահանջների թվին էր սրտականում նաև տերե-

րի հրաժարվելը հիվանդանոցային գանձարկիների վարչութայունը մասնակցելուց: Իրավաբանորեն այդ պահանջը պատճառաբանվում էր այսպես. որենքը չի կարող արդելը լինել տերերի ներկայացուցիչների համար՝ հրաժարվելու իրենց լիազորութայուններից, իսկ յեթե նրանք «կամովին» հրաժարվում են գանձարկում ներկայացուցիչներ ունենալուց, ապա գանձարկը անցնում է բանվորների ձեռքը:

Նույն ձևով էր դրված և այն պահանջը, վորի համաձայն բոլոր ապահովագրական տուրքերը պետք է դրվեն գործարանատերերի վրա: Որենքով տուրք էյին վճարում և բանվորները, բայց չէ վոր վոչ վոր չէր կարող արգելել գործարանատիրոջը՝ տուրք վճարել թե իր կողմից և թե բանվորների փոխարեն:

Որենքի համաձայն, գործարանատիրոջ ցանկութայամբ բժշկական ոգնութայան գործը կարող էր փոխանցվել հիվանդանոցային գանձարկի իրավաւութայունը: Բանվորական ապահովագրական կանոնադրութայամբ բժշկական ոգնութայան գործի հանձնումը հիվանդանոցային գանձարկին պարտավորեցուցիչ էր, ըստ վորում գործարանատերը պետք է վճարեր հատուկ տուրք, վորը լիովին բավարարեր բժշկական ոգնութայան կարիքներին:

Ապահովագրական որենքով նախատեսանվում էին նրպատաներ այսքանից. — մինչև — ... այսքան.. Հափերով: Բանվորական ապահովագրական կանոնադրութայունը պարտավորեցուցիչ կերպով նախատեսնում էր նոպատի գերադույն չափը:

Այնուհետև, ապահովագրական որենքը նախատեսնում էր մանր, գործարանային տիպի հիվանդանոցային գանձարկիներ, մի հանգամանք, վորի շնորհիվ կառավարութայունը և գործարանատերերը հնարավորութայուն ունեին ճնշում գործ դնելու բանվորական ներկայացուցիչների և

զանձարկղի վրա և այդպիսով յենթակա պահելու վերջիններին: Բայց, միաժամանակ «հանցավոր անդուշտությամբ» որենքի մեջ մասն աշխարհի հողմածներ, վորոնք թույլատրում եին առանձին զանձարկղների միացում, իհարկե՝ ապահովագրական ստյանի թույլտվությամբ: Բանվորական ապահովագրական կանոնադրությունը սպառնալիք էր այդ հանգամանքը և նախատեսում պարտադիր քաղաքային և շրջանային ընդհանուր դրամապահներ:

Մենք այստեղ չենք թվի բոլոր բանվորական ապահովագրական լոգուները, վորոնք, ընդհանուր առմամբ, անձանաչելի եին դարձնում ցարական ապահովագրական որենքները: Ի հարկե, այդ լոգուները հաճախ չէին իրադրվում, բայց և այնպես հաջողվում էր վորոշ վայրերում մասնակի բարելավումներ մտցնել ապահովագրական որենքներում:

ՊԱՅՔԱՐ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԴԵՄ

Ապահովագրական ագիտացիայի գլխավոր սկզբունքն այն է, վոր ապահովագրական գործը պետք է հանձնել բանվորների ձեռքը—մի սկզբունք, վորը պատկանում է պրոլետարական հեղափոխության: Բոլոր գործերը բանվորները իր վարեն իրենց սեփական ուժերով: Բանվորները պետք է կառավարեն վոչ միայն հիմնդրոնոցային զանձարկղները, այլև գործարաններն ու պետութայունը: Բանվորներն իրենք պետք է կառավարեն, առանց բուրժուազիայի, գործարանատերերի մասնակցության:

Ահա թե ինչ եին պահանջում հեղափոխական բանվորական զանգվածները և նրանց առաջապահ՝ բոլշևիկների կուսակցութայունը:

Ուստի և զարմանալի չէ, վոր անգամ այդ նեղ ասպարիզում ուժեղ պայքար առաջ յեկավ մենշևիկներին դեմ, վորոնք (մենշևիկները) կողմնակից եին միաբանելու

բուրժուազիայի հետ, ընդունելու տերերի մասնակցութայունը վոչ միայն ապահովագրական զանձարկղներում, այլև պետութայուն վոչ անտեսական ու քաղաքական կյանքը կառավարելու գործում:

Մենշևիկները ջնստաբարում եին բոլշևիկների առաջադրած բոլոր լոգուները:

Յերբ հեղափոխական բանվորութայուն կողմից պահանջ դրվեց, վոր ապահովագրական տուրքերը պարտավորեցուցիչ կերպով վճարեն գործարանատերերը և բժշկական ոգնութայուն գործն անցնի զանձարկղների իրավասութայուն, մենշևիկները դեմ արտահայտվեցին այդ պահանջին, պատճառաբանելով, վոր արդյունաբերողների վրա ծանր բեռ դնելով, իրր թե կը վնասենք ուստական արդյունաբերութայուն զարգացմանը: Իրապես, դրանով մենշևիկները միայն պաշտպան եին կանգնում արդյունաբերողների գրպաններին:

Վերջապես, և ապահովագրական պայքարի ժամանակ, ինչպես միշտ, մենշևիկները հակադրական «իրավաբանական» տուրք եին տալիս ցարական որենքներին: Նրանց մշտական առարկութայունը մեր ապահովագրական լոգուներին դեմ այն եր, վոր այդ լոգուները որենքների շրջանակներից դուրս են գալիս, ուստի և նրանց իրականացումը խիստ կասկածելի է, և նման լոգուներ առաջադրելը համարում եին անմիա դեմապոզիայի գործ:

Մեղադրելով բոլշևիկներին դեմագոգիստում, մենշևիկներն աշխատում եին քողարկել իրենց հեռավորականութայունը, իրենց կուսիցիոն, համաձայնական քաղաքականութայունն ի վնաս բանվոր դասակարգի և հոգուաբուրժուազիայի:

Մեր ապահովագրական լոգուները գրավեցին բանվորական մասսաների ճնշող մեծամասնութայուն ուշադրութայունը: Ապահովագրական պայքարը մերկացնում եր մենշևիկներին ապահովագրական հողի վրա: Իսկ, ետպես,

դա ունեւր ավելի լաշն նշանակութիւն:

Ապահովագրական պայքարը (ազիտացիան, կամպանիան) դատարարակում եր հեղափոխական գիտակցականութիւն, դարթեցնում եր բանվորական զանգվածներին (մասսաներին) հեղափոխական յեռանդն ու թափը: Ապահովագրական պայքարին շնորհիվ առաջ յեկավ առաջնորդ—բանվորների մի ամբողջ շարք: Վորոնք կոչվեցին «ապահովագրականներ»: Այդ «ապահովագրականները» հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո սկսեցին աշխատել օրէտական շինարարութիւն բոլոր ճյուղերում, և կարելի ե համարձակ ասել, ամեն տեղ առաջին շարքերում յեղան:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ապահովագրական պայքարն ու ազիտացիան առաջ մղեցին վոչ միայն ապահովագրական լոկունդներ, այլև բանվորական ապահովագրական ծրագիր: Այդ ծրագիրը ձևակերպված եր հետևյալ կերպ:

Սոցիալական ապահովագրութիւնը պետք ե ապահովի բոլոր բանվորներին ու ծառայողներին՝ աշխատունակութիւնը կորցնելու և գործազրկութիւն բոլոր դեպքերում, աշխատավարձի լրիվ հատուցմամբ: Այսպիսով պետք ե սահմանվի սոցիալական ապահովագրութիւն հիշանդութիւն, հաշմանդամութիւն, մայրութիւն, ալրիութիւն և վորքութիւն, գործազրկութիւն և զժբախտ պատահարների դեպքերին համար:

Ապահովագրութիւնը պետք ե իրագործվի արդյունաբերողների և պետութիւն հաշվին: Ապահովագրական ամբողջ գործը պետք ե վարեն (կառավարեն) բանվորները:

Մենշեվիկները հեղնանքով եին խոսում և գրում մեր ապահովագրական ծրագրի մասին, վորովհետև չեին համարձակվում բացահայտ թշնամական վերաբերմունք ցոյց տալ: Յերբ մենք պնդում եինք, թե այդ ծրագրի իրագործման ծախքերի համար անհրաժեշտ ե աշխատավարձի

25⁰/₀-ը, մենշեվիկները գրում եին, թե «արդյունաբերութիւնը» չի դիմանա այդպիսի աուրքերի: Ի հարկե, խոսքը արդյունաբերութիւն մասին չեւ, վորովհետև արդյունաբերութիւնը կարող ե զարգանալ միայն բանվորի իրակատար ապահովման դեպքում: Այդտեղ մենշեվիկները պաշտպան եին կանչնում անհեռատես արդյունաբերողների շահերին, այն արդյունաբերողների, վորոնք միայն մտածում են որվա վատտակի մասին և ավելի հեռուն չեն նայում:

ՄԵՆՇԵՎԻԿԱԿԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ

Փետրվարյան հեղափոխութիւնից հետո իշխանութիւնն անցավ մենշեվիկների և եսերների ձեռքը: Ժամանակավոր կառավարութիւն մեջ մենշեվիկներն ստացան աշխատանքի մինիստրութիւն պորտֆելը և ապահովագրական որենքներ հնաոտրակեցին:

Հիմա տեսնենք, թե վորպիսին եր մենշեվիկական սոցիալական ապահովագրութիւնը, վորը նախատեսված եր ժամանակավոր կառավարութիւն 1917 թ. հուլիս 25-ի հրատարակած ապահովագրական որենքով:

Նախ՝ մենշեվիկները խիստ փոքր չափով ավելացրին ապահովագրվողների թիվը: Սոցիալական ապահովագրութիւնը նրանք տարածեցին մինչև հինգ բանվոր ունեցող մանր ձեռնարկութիւնների վրա, մինչդեռ ցարական որենքներով ապահովագրութիւնը տարածվում եր միայն 60-ից վոչ պակաս բանվորներ ունեցող ձեռնարկութիւնների վրա: Բայց նրանք ապահովագրութիւնից դուրս թողին կառավարական ձեռնարկութիւնների, յերկաթուղու, դյուղատնտեսական, տնային արդյունաբերութիւն բանվորներին, առևտրա-արդյունաբերական ծառայողներին և ծառաներին: Այսպիսով լավագույն դեպքում, մեծեկիկներն ապահովագրվողների թիվը ավելացրին միայն յեկու հարյուր հազար հոգով, բողնելով առանց ապա-

Տոկոս չբաժան առնվազն 10 միլիոն բանվոր:

Հիվանդութեան համար սահմանված նպաստների չափի հարցում մենչեիկները ժխտականորեն հավատարեցրին բնաանիքավորների հետ, սահմանելով նպաստ՝ աշխատավարձի $\frac{1}{2}$ -ից մինչև $\frac{2}{3}$ -ի չափով, յերբ ցարական օրենքներով նախատեսվում էր $\frac{1}{4}$ -ից մինչև $\frac{2}{3}$: Նպաստներ տալու ժամանակամիջոցը նրանք թողին նախկինը:

Մենչեիկական օրենքներով բժշկական ոգնությունը կարող էր անցնել բանվորների ձեռքը, անկախ գործարանատերերի համաձայնությունից: Բայց, մյուս կողմից, օրենքով սահմանված էր, Վեր բժշկական ոգնություն կազմակերպելու համար գործարանատերերից աշխատավարձի 2 տոկոսից ավելի չպետք է վերցնել: Հասկանալի է միանգամայն, Վոր այդպիսի գումարով չէր կարելի վոչ մի բժշկական ոգնություն կազմակերպել: Ուստի և մենչեիկական բեֆորմը (բարենորոգումը) կարող էր միայն թղթի վրա մնալ:

Բանվորների հիմնական պահանջը, Վոր տուրքերը դրվեն տերերի վրա միայն, մենչեիկները չը համարձակվեցին իրականացնել: Նրանք միայն հավատարեցրին տերերի և բանվորների կողմից վճարվող տուրքերի չափերը: Յուրաքանչյուր 100 ուղբի ապահովագրական վճարի 50 ուղբին պետք է վճարեին տերերը, 50 ուղբի ել բանվորները:

Ապահովագրությունը կառավարելու հարցում մենչեիկները ամենամեծ զիջումներն արին բանվորական պահանջների հանդեպ: Հիվանդանոցային գանձարկիների վարչությանը և բնդհանուր ժողովներին մասնակցելու իրավունքից զրկվեցին տերերը: Բայց մի՞թե կարող էին մեկնեցիկներ բոլորովին հեռավարվել բուլժուագիայի հեճ գործակցելուց: Վերասուգի հանձնաժողովների կազմի մեջ անցկացրին տերերի ներկայացուցիչներին: Ապահովագրական առյանսրոււ և խոզհոգում նրանք ավելի քիվ կիրառեցին կռալիցիայի սկզբունքը, տերերի թիվը

հախասարեցնելով բանվորական ներկայացուցիչների թվին:

1917 թ. հոկտեմբերի 17-ին մենչեիկները հրատարակեցին ևս մեկ օրենք, Վորը վերաբերում էր հզիւթյան ու ծննդաբերութեան գեպքերին: Այդ օրենքով ծննդաբերութեան համար արվող նպաստի ժամանակամիջոցը ավելացվեց յերկու շաբաթով, այն է 6 շաբ. փոխարեն՝ 8 շաբ. հասցրին: Նպաստների չափը մնաց նախկինը:

Մենչեիկական ապահովագրական օրենքների այդ համառոտ տեսությունից պարզ յերևում է, Վոր մենչեիկները գրեթե անփոփոխ թողին ցարական ապահովագրական օրենքները:

Բանվորական պանովագրական ծրագրի յեվ վոչ մի կեցք նրանի յիւսկործեցին:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՈՐԵՆԷՆԵՐԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունից մի քանի օր հետո խորհրդային կառավարությունը գեկրեստով հրատարակեց բանվորական ապահովագրական ծրագիրը: Բայց, շուտով, կոմսունիստական շինարարութեան բնդհանուր ուղղութեամբ բանվորների սոցիալական ապահովագրությունը տեղի ավեց բոլոր աշխատավորների սոցիալական ապահովութեան, Վորը հանդիսանում է գերազույն աստիճանը ապահովագրութեան բնագավառում՝ և համապատասխանում է անտեսութեան սոցիալիստական ձեվերին: Նոր անտեսական քաղաքականութեան շրջանում նորից առաջ յեկավ բանվորների հատուկ ապահովութեան հարցը՝ սոցիալական ապահովագրութեան հիմնաքներով:

1921 թ. նոյեմբերի 15-ին Ռ.Ս.Ֆ.Ն. ժողկոմների խորհուրդը հաստատեց սոցիալական ապահովագրութեան դեկրէտը, Վորով ապահովագրությունը տարածվում է անխափր բոլոր բանվորների ու ծառայողների վրա՝ աշխատունակությունը կորցնելու և գործազրկութեան բոլոր դեպքերում: Այդտեղ ապահովագրական տուրքերը վճար

րում են ձեռնարկութունների վարչութիւնները կամ տե-
րերը, առանց վորեւ գրամական ծախք դնելու բանվոր-
ների վրա:

ժողկոմխորհի և Սոցալժողկոմի այդ դեկրետով, ինչ-
պէս և հետագա փորձումներով մանրամասնորեն սահ-
մանված են ապահովութեան չափերն ու տեսակները,
ապահովագրական տուրքերի չափերն ու մուծելու կարգը,
և սոցիալական ապահովագրութեան գործը վարելու կարգը:

Նոր խորհրդային որենքներով բանվորներն ու ծա-
ռայողներն ապահովագրված են հիվանդութեան, ծննդա-
բերութեան, մահվան և դժբաղա պատահարների հետևան-
քով աշխատունակութիւնը կորցնելու և դործադրելութեան
դեպքերի համար: Խորհրդային որենքներով նախատեսվող
բոլոր բանվորների ու ծառայողների ամեն տեսակի ա-
պահովագրութիւնը գոյութիւն չունի արևմտյան կապի-
տալիստական յերկրներից և վոչ մեկում: Բացի այդ, մե-
ղանում նախատեսված են ապահովագրական նպաստ-
ների նաև լրացուցիչ տեսակներ՝ մայրերին, յերբ իրենք են
կերակրում յերեխային, և նմանապէս՝ յերեխային խնա-
մելու պետքերի համար: *

Ինչ վերաբերում է ապահովագրական նպաստներին
չափին ու վճարման տեւողութեանը, նպաստը արվում է
աշխատավարձի լրիվ չափով և աշխատունակութիւնը կոր-
ցրած ամբողջ ժամանակամիջոցում: Գործադրելութեան
վերաբերմամբ, ճիշտ է, կատարված են սահմանափակում-
ներ: Գործազուրկին նպաստ է արվում միջին աշխատա-
վարձի $\frac{1}{6}$ -ից մինչեւ $\frac{1}{2}$ -ի չափով՝ 15 շաբաթվա ընթաց-
քում, ըստ վորում մեկ տարվա ընթացքում նպաստ վճարելու
ժամանակամիջոցը 26 շաբաթից դենը չի անցնում*): Վո-
րոշ սահմանափակումներ արված են նաև հաշմանդամնե-

*) Ներկայումս՝ աշխատանքի որենքների կողեկում յեղած
փոփոխութիւնների համաձայն հիշյալ 26 շաբաթը համարվում
է նպաստ տալու նվազագույն ժամանակամիջոց (մի տարում):

րին տրվող ապահովագրական նպաստների չափերը:
Այն է՝ հաշմանդամութեան համար նպաստ տալու
իրավունքը պայմանավորված է վարձու աշխատանքի
Ցամյա ժամանակամիջոցով (ստաժով), և նմանապէս,
յերբ բանվորը 16 տար. հասակից անընդհատ վարձու աշ-
խատանք է կատարել, անկախ ստաժից**):

Այդ սահմանափակումները պետք է բացատրել այն
հանդամանքով, վոր մեր հանրապետութիւնը կրել է իմ-
պերիալիստական և քաղաքացիական պատերազմի բոլոր
ծանրութիւնները, ժողովրդական անտեսութիւնը գրա-
նվում է ծայր քայքայման վիճակում: Համենայն դեպս,
այդ ժամանակավոր սահմանափակումները հետեւանք են
վոչ թե գործարանատերերի շահերի ու ցանկութիւնների,
այլ այդ թելադրում են բանվորութեան շահերը, այն բան-
վորութեան, վորն այժմ իշխանութիւնն իր ձեռքին եպանում:

Խորհրդային կառավարութիւնը, նկատի ունենալով
բանվոր դասակարգի լիակատար ապահովութեան ու պաշտ-
պանութեան շահերը, դարձյալ կարողացել է սահմանել ձեռ-
նարկութիւնների՝ համար այնպիսի ապահովագրական
տուրքեր, վորոնք միջին հաշվով մոտավորապէս կազմում
են այն 25% -ը, վորը ցարի ժամանակ, յերբ արդյունա-
բերութիւնը բարձր վիճակում էր, մենշևիկները ռու-
սական արդյունաբերութեան ուժերից վեր եին համարում:

Այդ ապահովագրական տուրքերը և կկազմեն այն
Փոնդերը, վորտեղից և ապահովագրական նպաստներ կը
արվեն: Գործազուրկներին՝ գործադրելութեան ամբողջ ժա-
մանակաշրջանում, լրիվ աշխատավարձ տալն առայժմ ան-
հնարին է: Այդտեղ, բանվորական ամբողջագրա-
կան ծրագիրը լիակատարութեամբ կիրադործվի այն ժա-
մանակ, յերբ կվերականգնի մեր արդյունաբերութիւնը:

**) Ցամյա ստաժը, յաջող վերացված է աշխատանքի հաշ-
մանդամների համար կազմում 16 տար. և միայն ձեռութիւնից առաջ
յեկած հաշմանդամութեան համար:



ինչ վերաբերում է հաշմանդամության, պետք է առանձին, վոր այդտեղ ել ստիպված յեղանք սահմանափակումներ անել, նկատի ունենալով հաշմանդամների այն հակայական թիվը, վոր մեզ ժառանգութուն մնաց իմպերիալիստական պատերազմից:

Մակայն, ընդհանուր առմամբ, բանվորական ապահովագրական ծրագիրը կարելի է գրեթե իրագործված համարել և այժմ, չնայած Խորհրդային Ռուսաստանի անտեսական ծանր կացության, մի կացութուն, վորը պահանջում է հանրապետության նյութական միջոցների խստագույն անտեսում:

Իսկ ինչ վերաբերում է բանվորական ապահովագրական ծրագրի ամենակարևոր պահանջին, այն է, վոր սոցիալական ապահովագրության գործը վարեն բացառապես իրենք բանվորները, ապա այդ, իհարկե, արդեն ամբողջովին իրագործված է Խորհրդային որենքներով: Այդտեղ՝ վոչ մի սահմանափակում չեր կարող լինել, վորովհետե իշխանությունը Խորհրդային Ռուսաստանում պրոլետարիան, բանվորական է, և սոցիալական ապահովագրության գործը, իհարկե, կվարեն բանվորներն իրենք:

Խորհրդային որենքներով, ապահովագրական հիմնական բջիջ է հանդիսանում ապահովագրական գանձարկը: Գանձարկը կառավարում է Ապահովագրական կոմիտեն, վորն ընտրվում է գանձարկի անդամների (մասնակցող բանվորների) կողմից արհեստակցական միությունների ամենամսյակ մասնակցությամբ, վորովհետե բանվորների շահերի ընդհանուր պաշտպանության և սոցիալական ապահովագրության միջև պետք է լինի ամենաթեթև և անփափաճ կապ:

Ներկայումս գանձարկներում վոչ մի արդյունաբերող (գործարանատեր) չկա: Ուստի և տերերի կողմից վոչ մի ճնշում չի կարող լինել:

Ինչ վերաբերում է յերկաթուղու և ջրային հաղորդակցության բանվորներին, նրանք զատված են և կազմում են առանձին, փոխադրողների գանձարկներ, նկատի ունենալով փոխադրողների աշխատանքի հատուկ պայմանները, և այն, վոր նոքա հաճախակի հեռանում են իրենց մշտական բնակավայրից հարյուրավոր վերոտեր:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

Խորհրդային ապահովագրական որենքները հերթական դարձրին Խորհրդային ապահովագրական կամպանիայի (պայքարի, ագիտացիայի, քարոզի) հարցը: Իհարկե, այդ կամպանիան բոլորովին այն չէ, ինչ վոր յեղել է Թադավորի ժամանակ: Ներկայումս այլևս պայքար չենք մղում կառավարության և գործարանատերերի դեմ: Այժմ կամպանիայի ամբողջ նպատակն այն է, վոր ապահովագրական մարմինները ձգտում են ամեն կերպ բանվորական մասսաներին մոտեցնել ապահովագրական գործին, մի գործ, վորը բանվորների գործն է, նրանց կենսական շահերի գործը:

Խնդիրը շատ կարևոր է և անհետաձգելի: Անհրաժեշտ է, վոր բոլոր արհեստակցական ու կուսակցական կազմակերպությունները ամենագործին մասնակցություն ունենան ապահովագրական կամպանիայի գործում: Պետք է հիմնվեն սոցիալական ապահովագրության հատուկ դասընթացներ, պետք է բոլոր կուսակցական Խորհրդային դպրոցներում ու բանվորական ակումբներում դասախոսություններ կարդացվեն ապահովագրության հարցերի շուրջը: Կուսակցական և Խորհրդային մամուլը պետք է լայն ագիտացիա ու պրոպագանդ սկսի սոցիալական ապահովագրության մասին:

Սոցիալական ապահովագրության գործում մենք այժմ ել ենք պատահում մենշևիկների ու մենշևիկություն անող ինտելիգենտների հետ: Ճիշտ է, բարեբախտաբար

ներկայումս բանվորական Ռուսիայում այդ տիրաճաշակ ասպետներից քիչ և մնացել, նրանց շատ քչերն են լսում, բայց և այնպես ելի պետք և հաշվի առնել մենշևիկական քննադատությունը:

Հիմա մենշևիկները հանդես են գալիս սոցիալական ապահովագրության «անկախության» պիմակով: Նրանք այժմ մեզ հրամայում են ցարական ժամանակներում մեր կողմից առաջադրված այն լոզունգը, վորով մենք պահանջում էինք ապահովագրական գանձարկիների անկախությունը, մի լոզունգ, վորի դեմ էլին դուրս գալիս այն ժամանակ մենշևիկները հանուն իրենց փայփայած կոալիցիայի (գործակցություն) բուրժուազիայի հետ:

Մենշևիկություն անողներն այժմ ասում են, վոր ապահովագրական գանձարկները պետք և բոլորովին անկախ լինեն պետական իշխանությունից: Իհարկե, այդ խոսքերը վոչ այլ ինչ են, բայց յեթե հետին նպատակների ու միաժամանակ քաղաքական իմաստակություն արդունք:

Պետական իշխանությունն այժմ բանվորական իշխանություն է: Սոցիալական ապահովագրության հարցում բանվորական իշխանությունը համարում է հնարավորության ամենահեռավոր սահմաններին: Բանվորական իշխանությունը շատ կարևոր նշանակություն է տալիս սոցիալական ապահովագրությանը: Վոչ մի կերպ չի կարելի ապահովագրական գանձարկները (կազմակերպությունները) հակադրել խորհրդային մարմիններին ու արհեստակցական միություններին:

Մենշևիկություն անողները յերազում են քաղաքական հենարան ստեղծել իրենց համար «անկախ» ապահովագրական գանձարկներում: Բայց բանվորական մասսաները յերբեք չեն մոռանա մենշևիկյան ապահովագրական որենքները: Մենշևիկներն ու մենշևիկություն անողները տեղ չպետք և ունենան ապահովագրական մարմիններում,

ապահովագրական կոմիտեներում ու գանձարկողներում:

Ամեն տեղ, ապահովագրական բոլոր ընտրություններին, բանվորներն ապահովագրական մարմիններ կընտրեն այդ գործին հմուտ բոլշևիկներից և անկուսակցական բանվորներից ու մասնագետներից, վորոնք ազնվությամբ, առանց քաղաքական իմաստակությունների և «անկախության» կիրագործեն բանվորական ապահովագրական ծրագիրը, հենվելով խորհրդային ապահովագրական որենքներին:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ հրատարակութեամբ տպագրվում և և առաջիկայում լույս կտեսնի բաժնի պարբերական որդան «Ապահովագրական տեղեկագրեր»-ի առաջին համարը: Թերթում տեղ ևն բռնելու՝ ապահովագրութեան հիմնական խնդիրների լուսարանութեանը, ապահովագրական մարմինների գեղըհաներն ու վորոշումները, Սոցիալ. Ապահ. Բաժնի գործունեութեան համառոտ հաշվետվութեանները և ապահովագրական շարժման վերաբերող այլ նյութեր:

Միաժամանակ Սոցիալական Ապահովագրութեան Բաժինը ձևոնարկել և հանրամատչելի ապահովագրական գրականութեան հրատարակութեան, նպատակ ունենալով սոցիալական ապահովագրութեան գաղափարները դարձնելու աշխատավորական լայն զանրվածների սեփականութեան:

Ներկայումս պատրաստվում են տպագրութեան համար հետևյալ գրքույկները.

Ա. Վիճակուհով — Բանվորական ապահովագրական շարժումը:

Զ. Տեփեքոն — Բանվորների ապահովագրութեանը, վորպես դասակարգային պայքարի արդյունք:



Ն 95

11
24/99

ԳԻՆՆ Ե՛ 15 Կ.